ԱՍՍՈՒՐԱ - ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԲՈՊԱԼԱՍԱՐԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ

Չնայած այն հանգամանքին, որ ասսուրա-բաբելոնյան հակամարտության հիմնախնդրին անդրադարձել են մեծ թվով մասնագետներ[1], այնուամենայնիվ՝ այն չի դադարում արդիական լինելուց: Հիմնախնդիրը վերաբերում է այդ հակամարտության եզրափակիչ փուլին, այն է՝ Բաբելոնի թագավոր Նաբոպալասարի (Ք. ա. 625-605 թթ.) Ք. ա. 609-607 թթ. Հյուսիսային Միջագետք և Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններ կամ դրանց անմիջական հարևանությամբ գտնվող տարածքներ կատարած արշավանքներին:

Ք. ա. VII դարի վերջին Առաջավոր Ասիան ցնցվում էր պատերազմներից, որոնք ընթանում էին տարածաշրջանի գրեթե բոլոր լայնություններում: Այդ պատերազմների թիրախը, որ ընթանում էր ասորեստանյան և հակաասորեստանյան խմբավորումների միջև, հոգեվարք ապրող Ասորեստանն էր՝ իր գոյության վերջին փուլում:

Առաջավորասիական այդ թոհուբոհի ժամանակաշրջանում հիմնախնդրային է ուրարտական պետության կարգավիճակի հարցը: Եթե այն որպես քաղաքական որոշակի ուժ գոյություն ուներ և հարում էր ասորեստանյան խմբավորմանը, ապա արդյունքում, Ուրարտուն պետք է հանդես գար որպես ժառանգություն, իսկ եթե ոչ՝ ապա հակառակ խմբավորմանը՝ որպես ժառանգորդ: Հայ պատմիչների, մասնավորապես Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու հաղորդմամբ՝ հայկական պետությունը, որը կարող էր և Ուրարտուն չլինել՝ հակաասորեստանյան խմբավորման կազմում մասնակցել է Ասորեստանի դեմ մղվող պատերազմին՝ մինչև նրա հաղթական ավարտը[2]: Եվ եթե դա այդպես է, ապա այն չէր կարող հանդես գալ որպես ժառանգություն, լիներ այն Ուրարտուն կամ Հայկական լեռնաշխարհի մեկ այլ քաղաքական միավոր՝ հետևաբար, այն պետք է փնտրել ժառանգորդների ցուցակում:

Ք. ա. VII դ. երկրորդ կեսից ուրարտական թագավորների արձանագրությունները հիմնականում և գրեթե առանց բացառության՝

---

[1] *Տե՛ս, օրինակ,* S. Z a w a d z k i. The Fall of Assyria and the Median-Babylonian Relations in Nabopolassar Chronicle. Poznan-Delft: Adam Mickiewicz University Press-Eburon, 1988; Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, History of the Ancient Near East, Monographs-V, Ed. G. B. Lanfranchi, M. Roaf, R. Rollinger, Padova, 2003,XI, 468 p., 22 pl. ***և այլն***

[2] *Մ ո վ ս ի ս ի Խ ո ր ե ն ա ց ւ ո յ Պատմութիւն Հայոց, Երևան, 1981, Ա, ԻԱ, Թ ո վ մ ա յ ի վ ա ր դ ա պ ե տ ի Ա ր ծ ր ո ւ ն ւ ո յ Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985, I, Դ, այլն:*

տնտեսական բնույթի են[3]*, իսկ քաղաքական պատմությունը մթությամբ է պարուրված: Նշենք նաև, որ շուրջ կես դար գիտնականները աղբյուրագիտական տվյալների բացակայության պատճառով չէին կարողանում հստակեցնել տվյալ ժամանակաշրջանի ուրարտական արքայացանկը*[4]*: Այս հարցերին, որոնք կարոտ են գիտական լուրջ քննարկման ու պարզաբանման, մասնագետների կողմից տրվել են բազմաթիվ ու հակասական պատասխաններ: Այդ խնդիրներից է, ինչպես վերը նշեցինք, նաև Բաբելոնի թագավոր Նաբոպալասարի կողմից Հյուսիսային Միջագետք կատարած արշավանքի ռազմուղին և այլն:*

Իսկ նույն ժամանակաշրջանի քաղաքական պատմության վերաբերյալ մեր հիմնական տեղեկությունները բացառապես խարսխված են ասսուրաբաբելոնյան աղբյուրագիտական նյութերի վրա: Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք միայն այն արձանագրություններին, որոնք ուղղակի կամ անուղղակի կապ ունեն Ուրարտուի հետ: Մասնագետների շրջանակներում Ուրարտուի, այսպես կոչված, վերջին շրջանի քաղաքական պատմության ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն է ունեցել Նորբաբելական B. M. 21901(96-4-9, 6) *և* B. M. 22047(96-4-9, 152) *ժամանակագրությունները*[5]*, կամ ըստ Ա. Կ. Գրեյսոնի՝* Chronicle 3 *և* 4*:*

Նաբոպալասարի կառավարման ժամանակաշրջանի ամբողջ քաղաքական պատմությունը, որ ներառված են վերոհիշյալ արձանագրությունների մեջ, մեզ են հասել բավական վնասված: Առաջին երկուսում B. M. 25127(98-2-16,181) *և* B. M. 21901(96-4-9,6) *կամ* Chronicle 2 *և* 3 *ժամանակագրությունները, որոնք ներառում են Նաբոպալասարի կառավարման 1-ին տարուց մինչև 19-րդ տարին ընկած ասսուրա-բաբելական քաղաքական հակամարտության նկարագրությունը:*

Ք. ա. 627 թ. մահանում է Ասորեստանի թագավոր «Տիեզերքի տիրակալ» Աշշուրբանապալը (Ք. ա. 669–627 թթ.): Նրա մահից հետո Ասորեստանը հայտնվեց քաղաքական քաոսի մեջ՝ ապստամբեցին մի շարք հպատակ երկրների կառավարիչներ: Հարմար առիթը բաց չթողեց նաև Ծովի

---

[3] Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 364–377.

[4] Н. В. Арутюнян. Некоторые вопросы последнего периода истории Урарту.– Древний Восток. Ереван, 1976, № 2, с. 98–114; *Ս. Գրիգորյան. Բիայնիլի-Ուրարտուի եզրափակիչ դարաշրջանի պատմության ուսումնասիրության խնդիրները արդի պատմագրության մեջ.– «Մերձավոր Արևելք», 2009,* № *6, էջ 57-63:*

[5] C. J. Gadd. The Fall of Nineveh, The Babylonian Chronicle № 21. 901 in the British Museum. London, 1923, pp. 1-42, pls. I-VI; D. D. Luckenbill. Ancient Records of Assyria and Babylonia, v. II, Chicago, 1927, §§ 1166-1186(§§ 1186-1185); И. М. Дьяконов. Последние годы Урартского государства по Ассиро-вавилонским источникам.– Вестник древней истории (*ՅԼՊՆԽՀ»Ռ՝* ВДИ), 1951, № 2, с. 29–32; он же. Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей.– ВДИ, 1981, № 2, с. 34—46; D. J. Wiseman. Chronicles of Chaldaean Kings (626–556 B.C.) in the British Museum. London, 1956, pp. 11–23, 44–46, 54–66; A. K. Grayson. Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley- New York, 1975, pp.90-98; J.-J. Glassner. Mesopotamian Chronicles, Atlanta, 2004, pp. 218-225, *իսկ քաղաքական պատմության վերաբերյալ տե՛ս* S. Zawadzki. The Fall of Assyria and the Median-Babylonian Relations in Nabopolassar Chronicle *և այլն:*

երկրի՝ Բիթ-Յակինի կառավարիչ Նաբոպալասարը և ապստամբեց: Շուրջ մեկ տարվա պայքարից հետո՝ Ք. ա. 626 թ. արախսամնա ամսի 26-ին (նոյեմբերի 23-ին) նա մտավ Բաբելոն և Ք. ա. 625 թ. (հունվարի 27-ին) պաշտոնապես հռչակվեց թագավոր[6]*: Փոփոխակի հաջողություններով պայքարն ընթացավ մինչև Ք. ա. 623/22 թ., որից հետո «Ժամանակագրության»* (Chronicle 2) *վնասվածության պատճառով Ք. ա. 623/2 – 617 թթ. տեղի ունեցած իրադարձությունների մասին անտեղյակ ենք:*

B. M. 21901(96-4-9, 6) *կամ* Chronicle 3*-ը քիչ թե շատ ավելի տեղեկություններ է սկսում հաղորդել Նաբոպալասարի կառավարման 10-րդ տարվանից կամ Ք. ա. 616 թ. սկսած:* B. M. 21901*-ը կոչվում է նաև Նինվեի անկման ժամանակագրություն և ընդգրկում է Նաբոպալասարի կառավարման 10-րդ տարվանից մինչև 18-րդ տարին (Ք. ա. 616–608 թթ.) ընկած ժամանակահատվածի քաղաքական պատմությունը:*

Ք. ա. 617/6 թ. Ասորեստանը հարավում ռազմական ակտիվ գործողությունները վերսկսելու պատճառով սկսում է դաշնակիցներ որոնել ի դեմս Մաննայի և Եգիպտոսի: Ք. ա. 616 թ. Այարու ամսին (ապրիլ-մայիս) Նաբոպալասարի գլխավորությամբ բաբելոնական գնդերը շարժվեցին Եփրատի հովիտն ի վեր: Ասորեստանի Սուխու և Խինդանու մարզերն առանց կռվի հանձնվեցին: Աբու ամսի 12-ին (հուլիսի 23-ին) Խինդանու մարզի Կաբլինու քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանցիները և նրանց օգնության հասած մաննական ուժերը խայտառակ պարտություն կրեցին ու նահանջեցին[7]*: Նույն օրը Նաբոպալասարին հաջողվեց գրավել նաև Կաբլինու քաղաքը: Բաբելացիները գրեթե առանց կորուստների մեկը մյուսի հետևից գրավեցին Եփրատի ավազանի Մանե, Սախիրու և Բալիխ քաղաքները: Ավարով ու գերիներով ծանրաբեռնված բաբելոնական զորքը ետ քաշվեց՝ ճանապարհին գրավելով նաև Խինդանու քաղաքը: Շուտով՝ թաշրիտու ամսին (սեպտեմբեր–հոկտեմբեր), Եփրատի հովտում հայտնվեցին եգիպտացիները: Ասորաեգիպտական ուժերը հասան մինչև Կաբլինու, սակայն չհամարձակվեցին ներխուժել Բաբելոնի տարածք: Նաբոպալասարը ժամանակ իսկ չկորցնելով՝ շարժվեց թշնամուն ընդառաջ: Արրապխա մարզում՝ Զաբան (Փոքր Զաբ) գետի վրա, Մաղանու (ներկայիս Քերկուկ) քաղաքի մոտակայքում նրան հաջողվեց ջախջախել և ետ շպրտել դաշնակիցներին, որից հետո ավարով ու գերիներով Տիգրիսի աջ ափով, առանց որևէ խոչընդոտի, վերադարձավ Բաբելոն*[8]*: Ք. ա. 616 կամ 615 թ. մարերը, ամենայն հավանականությամբ՝ օգտվելով Կաբլինուի տակ մաննացիների կրած պարտությունից, գրավեցին Մաննան՝ Ասորեստանին զրկելով հյուսիսային դաշնակցից:*

Ք. ա. 615 թ. Բաբելոնի արքա Նաբոպալասարը դիմեց վճռական գործողությունների: Այարու ամսին (ապրիլ–մայիս) բաբելացիները սրընթաց ռազմերթով հասան Աշշուր քաղաքին, սակայն գրոհով այն վերցնել չկարողացան: Քաղաքին օգնության շտապած Սինշարիշկունի (Ք. ա. 623–612 թթ.) ասորեստանյան գլխավոր ուժերը բաբելացիներին ստիպեցին նահանջել:

---

[6] B. M. 25157, *տող 14-15:*

[7] B. M. 21901, *տող 1-9:*

[8] *Նույն տեղում, տող 10-15:*

Ասորեստանյան ուժերը հետապնդելով թշնամուն՝ նրանց պաշարեցին Տիգրիսի աջ ափին գտնվող Տակրիտայն ամրոցում: Սակայն տասը օր ամրոցը ապարդյուն գրոհելուց հետո՝ ասորեստանյան ուժերը ետ քաշվեցին[9]: Որոշ ժամանակ անց, Արախսամնա ամսին (հոկտեմբեր–նոյեմբեր)՝ մարերը Կիաքսարի (Ք. ա. 625–585 թթ.) գլխավորությամբ ներխուժեցին Արրապխայի մարզ և պատերազմի թատերաբեմը տեղափոխեցին դեպի բուն Ասորեստանի տարածք: Իսկ Ք. ա. 614 թ. աբու ամսին (հուլիս–օգոստոս)՝ մարերը հայտնվեցին Նինվեի շրջակայքում և գրավեցին մայրաքաղաքից քիչ հեռու (հյուսիս–արևմուտքում) գտնվող Տարբիցու քաղաքը: Հետո մարերը Կիաքսարի գլխավորությամբ անցան Տիգրիս գետը ու նրա աջ ափով հոսանքն ի վար շարժվելով՝ Ք. ա. 614 թ. օգոստոսին գրոհով վերցրեցին Ասորեստանի երբեմնի մայրաքաղաք Աշշուրը: Քաղաքը թալանվեց ու հիմնովին ավերվեց, բնակչության մի մասը սպանվեց, իսկ մյուսը՝ գերի տարվեց: Երբ ամեն ինչ վերջացած էր՝ Աշշուրում հայտնվեց Նաբոպալասարը: Էլուլ ամսին (օգոստոսի վերջերին) Աշշուրի ավերակներում Նաբոպալասարը դաշինք կնքեց Կիաքսարի հետ, որն ամրապնդվեց Նաբոպալասարի որդի Նաբուգոդոնոսորի և Կիաքսարի դստեր ամուսնությամբ[10]:

Ք. ա. 613 թ. այարու ամսին (ապրիլ–մայիս) ասորեստանցիներին հաջողվեց Բաբելոնի դեմ ոտքի հանել Սուխու մարզի բնակչությանը: Նրանց այս գործողությունները ևս անհաջողության մատնվեցին: Նաբոպալասարին հաջողվեց արագ ռազմերթով շարժվել նրանց դեմ և սիմանու ամսի 4-ին (հունիսի 10-ին) տիրացավ Ռախիլու քաղաքին: Միայն Անատու ամրոցը, որ գտնվում էր Եփրատ գետի վրայի կղզում, կարողացավ դիմակայել բաբելացիների գրոհներին: Շուտով ասսուրական գլխավոր ուժերը ստիպեցին Նաբոպալասարին նահանջել և առանց կռվի թողնել Եփրատի միջին ավազանը: Այսպիսի ժամանակավոր հաջողությունը, սակայն, գործնականում չփրկեց Ասորեստանին կործանումից[11]:

Ք. ա. 612 թ. ամռանը Նաբոպալասարը հարավից և Կիաքսարը արևելքից միաժամանակ ներխուժեցին Ասորեստան ու պաշարեցին մայրաքաղաք Նինվեն: Ասորեստանյան ուժերը, սովորության համաձայն, նետվեցին թշնամու վրա, և մարտերը հիմնականում ընթացան քաղաքի հյուսիս-արևելյան մատույցներում: Ասորեստանցիները երեք ճակատամարտ տվեցին, սակայն ուժերն անհավասար էին. անհաջող ճակատամարտերից հետո ասորեստանցիները նահանջեցին և փակվեցին քաղաքում: Ասորեստանի վեհաշուք մայրաքաղաքի պաշարումը տևեց երեք ամիս: Ք. ա. 612 թ. օգոստոսին դաշնակիցներին վերջապես հաջողվեց գրավել քաղաքը[12]: Նույն թվականի աշնանը՝ մարերն ավարի և գերիների իրենց բաժնով թողեցին Նինվեն ու տուն վերադարձան: Բաբելացիները՝ Հյուսիսային Միջագետքում թալանեցին ասսուրական Նացիբինու և Ռուցապու պրովինցիաները: Մայրաքաղաք Նինվեի ճակատագրին արժանացան նաև Ասորեստանի

---

[9] *Նույն տեղում, տող 16-22:*

[10] В. М. 21901, *տող* 23-30, И. М. Дьяконов. История Мидии. От древнейших времен до конца IV в. до н. э. М.–Л., 1956, с. 304, прим. 1.

[11] В. М. 21901, *տող 31-37:*

[12] *Նույն տեղում, տող 38-51:*

մյուս քաղաքները՝ Կալխան, Արբելան, Շարուկինը, Նացիբինը, Ռուցապան և այլն[13]*:*

Ասսուրական զորքերի մնացուկները ազնվականների գլխավորությամբ շարունակեցին պայքարը: Քաշվելով հյուսիս՝ նրանք իրենց կենտրոնը դարձրին Միջագետքի հյուսիս - արևմուտքում գտնվող Խառան քաղաքը: Ասորեստանի հաջորդ և վերջին թագավորը՝ Աշշուրուբալլիտ II-ը (Ք. ա. մոտ 612 – 607? թթ.), թագավոր հռչակվեց Խառան քաղաքում[14]*: Ըստ երևույթին, նա եղել է Էխուլխուլայի՝ Խառանի Լուսնի աստված Սինայի տաճարի քուրմ:*

Ք. ա. 611 թ. գարնանը Նաբոպալասարի գլխավորությամբ բաբելացիները ռազմական գործողություններ սկսեցին կատարել Խառանի շրջակայքում: Հետո բաբելացիները գրավեցին ու թալանեցին Շուպպայի շրջանը: Իսկ նույն տարվա արախսամնայի 28-ին (հոկտեմբեր–նոյեմբեր) նրանք գրավեցին ասորեստանցիների թիկունք հանդիսացող Ռուգգուլիտ քաղաքը (Սուգուր գետի Եփրատին խառնվելու վայրում՝ Կարքեմիշից հարավ-արևելք): Քաղաքի ողջ բնակչությունը սրի քաշվեց[15]*:*

Խառանի համար վճռական ճակատամարտը տեղի ունեցավ հաջորդ տարում: Ք. ա. 610 թ. գարնանը Նաբոպալասարը, անցնելով Ասորեստանի ողջ տարածքը հարավից հյուսիս, աշնանն ամայացրեց Խառան քաղաքի շրջակայքը: Նույն ամսին (արախսամնա) բաբելացիներին օգնության շտապեցին դաշնակից մարերը: Ասորեստանցիների թագավոր Աշշուրուբալլիտ II-ի և նրան օժանդակող Եգիպտոսի փարավոն Պսամետիխ I-ի (Ք. ա. 664-610 թթ.) ուժերը թողեցին Խառանը և նահանջեցին՝ անցնելով Եփրատ գետի աջ ափը[16]*: Քաղաքը թալանի ենթարկվեց, իսկ նրա հռչակավոր Էխուլխուլայի տաճարը դաշնակիցներն ավերեցին*[17]*: Ասորեստանյան զորքերի պարտությունն ու Խառանի անկումը եգիպտացիներն ընդունեցին որպես լուրջ սպառնալիք և Ք. ա. 609 թ. ամռանը փարավոն Նեխո II-ի (Ք. ա. 610–595 թթ.) գլխավորությամբ օգնության շտապեցին ասորեստանցիներին: Միացյալ ուժերով նրանք առանց լուրջ խոչընդոտի անցան Եփրատն ու պաշարեցին Խառանը: Ամռան ընթացքում տեղի ունեցան ծանր մարտեր: Աշնանը բաբելական գլխավոր ուժերը՝ Նաբոպալասարի գլխավորությամբ, օգնության շտապեցին Խառանին, իսկ նրանց դաշնակից մարերը, ըստ Ի. Մ. Դյակոնովի, նվաճեցին Ուրարտուն*[18]*:*

---

[13] *Նույն տեղում, տող 47-52:*

[14] *Նույն տեղում, տող 50:*

[15] *Նույն տեղում, տող 53-57:*

[16] *Նույն տեղում, տող 58-65:*

[17] *Հետագայում Բաբելոնի թագավոր Նաբոնիդը (Ք. ա. 556-539 թթ.) Էխուլխուլայի տաճարի ավերումը բացառապես վերագրեց մարերին, սակայն, ինչպես պնդում է Ռ. Ռոլլինգերը, Նաբոնիդի այդ քայլը քաղաքական լուրջ նպատակներ է հետապնդել, (տե՛ս* R. R o l l i n g e r. The Western Expansion of the Median "Empire": A Re-Examination, Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, History of the Ancient Near East, Monographs-V, p. 301):

[18] И. М. Д ь я к о н о в. М а л а я А з и я и А р м е н и я о к о л о 600 г. д о н. э. ..., с. 42. *Հարկ ենք համարում նաև նշել, որ հակառակ ռուս մասնագետների ջանքերին՝ Մարաստանը տեսնել որպես հսկայածավալ կայսրություն, այլ է արևմտյան մասնագետների վերաբերմունքը թե՛ Ուրարտուի անկման և թե՛ Մարական պետության վերաբերյալ: Տե՛ս* Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, History of the Ancient Near East, Monographs-V; М. А. Д а н д а м а е в, И. Н. М е д в е д с к а я. И с т о р и я М и д и и в н о в е й ш е й з а п а д н о й л и т е р а т у р е.– В Д И, 2006, № 1, с. 202–209.

Այս տարեգրությունից՝ B. M. 21901(96-4-9, 6) կամ ըստ Ա. Գրեյսոնի՝ Chronicle 3*-ի, մեզ համար կարևոր է Նաբոպալասարի կառավարման 17-րդ տարում (Ք. ա. 609 թ.) կատարված արշավանքները, որոնք ընթացել են Ուրարտուի հարավարևմտյան սահմանների մոտ, որն էլ միաժամանակ նրա անկման վերաբերյալ միակ աղբյուրն է:*

B. M. 21901 ժամանակագրության համապատասխան տողերը մեջբերում ենք ամբողջությամբ.

66. <MU XVII^{kám}> ina ^{iti}Du'ūzi ^{m}Aššur- ùballiÅ^{iÅ} šàr ^{kur}Aš-šur ummāni ^{kur}Mi-§ir ma-al-tú [. . .]

67. nāra ībir(bal)-ma ana mu≠≠i ^{uru}ï ar-ra-nu ana ka- šá-[di] illik [. . . i§- §ab(?)][19]-tu

68. šu-lu-tu šá šàr Akkadî^{ki} ana líb-bi ú-še-lu-ú id-du-k[u k]i-i ⌜iddūkū⌝^{ku} ina mu≠≠i ^{uru}ï ar-ra-nu it-ta-[du]

69. adi ^{iti}Ulūli §al-tú ana libbi āli īpuš^{uš} mim-ma ul il-[qi-ma ana arki-šú-nu][20] ul i≠≠isū^{su}

70. šàr Akkadî^{ki} ana re-§u-ut ummāni^{me}-šú illik-ma x [. . . ana ^{kur}][21] ⌜⌝-za-al-la i-li-ma

71. ālāni^{me} šá šadâni^{me} ma-a-du-t[ú] x [. . .] x-⌜šú-nu⌝ ina išāti iš-ru-up

72. ina ūmi^{mi}- šú-ma ummāni^{me} [. . .] adi pi-≠at ^{uru}Ú-ra-áš-Å^{u}

73. ⌜il⌝lik ina ⌜KUR(?)⌝ x[. . .]^{me}-šú-nu i≠-tab-tu

74. [š]u-lu-tu šá šàr [. . . ina libbi-šú ú-še-lu it-ta-as]-≠u-nim-ma[22]

75. ana ^{ur}[^{u} . . .] i-lu-⌜ú⌝ [. . .]x šàr Akkadî^{ki} ana māti-šú itūra^{ra}.

Թարգմանություն[23]

(66-75)«Տասնյոթերորդ տարին»՝ Դու'ուզու (հունիս–հուլիս) ամսին, Աշշուր-ուբալլիտը (II)՝ Ասորեստանի թագավորը, Եգիպտոսի մեծ բանակը [. . .] անցավ գետը (Եփրատը) և արշավեց Խառանի դեմ, որպեսզի այն գրա[վի, բայց ոչինչ չն]վաճեցին[24]*. կայազորը, որն այնտեղ տեղաբաշխել էր Աքքադի թագավորը, ջախջախեց նրանց(?): Նա Խառանի դիմաց ճամբար տեղակայեց: Մինչև Ուլուլու (օգոստոս–սեպտեմբեր) ամիսը քաղաքի դեմ ճակատամարտ տվեց, ոչնչի չհասավ, բայց ետ էլ չքաշվեց: Աքքադի թագավորը իր զորքերին օգնության շտապեց և . . . [. . .] բարձրացավ դեպի Իզալա (և) բազմաթիվ լեռնային քաղաքներ . . . [. . .] հրի մատնեց նրանց [. . .]: Այդ ժամանակ [. . . . .] զորքերը մինչև Ուրարտուի շրջան [շա]րժվեցին ե[ռկրում(?)] . . . [. . .]*

---

[19] *Ի. Մ. Դյակոնովն առաջարկում է վերականգնել* DU[-ma [x? ana q]ātē^{II} (?) [NU i§]-§ab-(?)tu, *տե՛ս* И. М. Д ь я к о н о в. М а л а я А з и я и А р м е н и я . . ., с. 38, п р и м. 37.

[20] *Ջ.-Ջ. Գլասսերն այն վերականգնում է՝* ul il-[qi-ma ana egir-šú-nu] *և թարգմանում՝ □բայց ճակատամարտին չմիացավ□* (but [did not join battle(?)], *տե՛ս* J.-J. G l a s s n e r. Mesopotamian Chronicles, p. 225.

[21] *Ի. Մ. Դյակոնովն ընթերցում է՝* §al(?)-t[ú DÚ-ma ana ^{KUR}], *տե՛ս* И. М. Д ь я к о н о в. с. 38, п р и м. 39.

[22] И. М. Д ь я к о н о в. Малая Азия и Армения..., с. 38, прим. 42.

[23] *Թարգմանությունը մերն է, օգտվել ենք Դ. Ջ. Ուայզմանի, Ա. Կ. Գրեյսոնի, Ջ.-Ջ. Գլասսերի և Ի. Մ. Դյակոնովի թարգմանություններից, իսկ աքքադերեն որոշ բառերի թարգմանության համար՝* The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago, Chicago–Glückstadt, 1956 –....

[24] B. M. 21901, *տող* 53-57.

թալանեց նրանց: Կայազորը, որ թագավորը [. . . նրանց մեջ (?) կանգնեցրեց՝ տեղա-հա]նեցին (և) [. . .] բարձրացան . . . (?) քաղ[աք]: Աքքադի թագավորը իր երկիր վերա-դարձավ:

Ինչպես երևում է ժամանակագրության 70-րդ տողի հաղորդումից, Նաբոպալասարը Խառանին օգնություն ցույց տալու փոխարեն կռիվներ է մղում Իզալայի (Մասիոն լեռներ, ներկայիս՝ Թուր-Աբդինը, որից հյուսիս ընկած տարածքը կոչվում էր Միջագետք Հայոց, և հենց այս լեռներով էր անցնում Մեծ Հայքի հարավային սահմանը) լեռներում: Բազմաթիվ քաղաքներ կողոպտելուց և հրի մատնելուց հետո Նաբոպալասարը հասնում է մինչև Ուրարտուի սահմանը (բառացի՝ adi pi-Ꞓat ^{uru}Ꞓ-ra-nš-ꞓu՝ *դեպի Ուրարտուի շրջան), այդտեղ կայազորներ է թողնում և վերադառնում իր երկիրը՝ այդպես էլ օգնություն ցույց չտալով Խառանի կայազորին: Այս առումով բավականին ուշագրավ հետևության է հանգել հայ անվանի գիտնական Ն. Ադոնցը, որի եզրակացությունը մեջբերում ենք ամբողջությամբ. «Տեքստը հաստատում է, որ քաղաքը պաշտպանվել է մինչև էլուլ (օգոստոս–սեպտեմբեր – Ռ. Ց.) ամիսը, բայց լռություն է պահում էլուլ ամսից հետո պատահածի մասին: Սակայն բացահայտ է, որ պաշարված քաղաքը գրավվել է Աշշուրբանիպալի կողմից՝ իր դաշնակից եգիպտացիների հետ միասին: Այս իրողությունից եզրակացվում է, որ պաշարման տարին Նաբոպալասարը մեկնեց պաշարված քաղաքին օգնության և վերադարձավ առանց արդյունքի: Նա նույնիսկ չհամարձակվեց մոտենալ քաղաքին, անշուշտ այն պատճառով, որ քաղաքն արդեն կորսված էր: Նա բավարարվեց պատերազմ վարելով Իզալայի լեռներում, մի նահանգում, որ, գուցե, հավատարիմ էր մնացել Ասորեստանին և դիմադրություն էր ցույց տալիս ներխուժողին: Ինչ էլ որ լինի, բաբելոնյան թագավորը վերադարձավ իր մայրաքաղաքը՝ Խառանը թողնելով բախտի քմահաճույքին»*[25]*:*

Ինչ մնում է «Ուրարտուի շրջան» արտահայտությանը, ապա՝ մեր խորին համոզմամբ, այստեղ գործ ունենք աշխարհագրական անվան, այլ ոչ թե քաղաքական միավորի հետ: Քանզի խիստ կասկածելի է, որ Նաբոպալասարը Խառանին օգնություն ցույց տալու փոխարեն հարձակվեր Ուրարտուի վրա: Բացի այդ, արձանագրությունների հաղորդումների համաձայն, ամենայն հավանականությամբ, պատերազմի թատերաբեմը, տվյալ ժամանակահատվածում, պետք է որ լիներ նախկին Շուպրիայի տարածքում և միևնույն ժամանակ խիստ անհավանական է, որ Ուրարտուն Ռուսա II-ից (Ք. ա. 685–645 թթ.?) հետո իշխեր այդ տարածքներում, մասնավորապես՝ Վանա լճից հարավ-արևմուտք: Ինչպես նշում է Ն. Հարությունյանը, տվյալ ժամանակահատվածում անկասկած է, որ Ուրարտուի իշխանության տակ էր Ազա երկիրը[26]*:*

Նաբոպալասարի ռազմարշավի ուղղությունն ինքնին ցույց է տալիս, որ բաբելացիները փորձել են Խառանին մոտենալ ո՛չ թե հարավից կամ արևելքից, այլ՝ հյուսիսից: Ամենայն հավանականությամբ, Նաբոպալասարը փորձել է շրջանցել ասորա-եգիպ-

---

[25] *Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. ակունքները X – VI դդ. մ. թ. ա., Երևան, 1972, էջ 292-293:*

[26] Н. В. Арутюнян. Биайнили (Урарту), военно-политическая история и вопросы топонимикы. Ереван, 1970, с. 328–333.

տական զորքերին և ընտրել է Ջեզիրե-Նածիբինա (Մծբին)-Մարդին ճանապարհը: Եվ անիմաստ կլինի կարծել, որ այս ռազմարշավն աննկատ է մնացել ասորեստանցիների համար:

Այսպիսով՝ հիմնվելով արձանագրության (B. M. 21901) տվյալների վրա՝ կարելի է ամենայն հստակությամբ պնդել, որ Նաբոպալասարի արշավանքն ուղղված էր ասորեստանցիների դեմ: Սակայն չի բացառվում նաև այն հանգամանքը, որ ասորեստանցիները, թիկունքում ունենալով եգիպտական փարավոնի օժանդակող ուժերը, շարժվեին բաբելացիներին ընդառաջ և Իզալլայի լեռներում ճակատամարտ տային: Ճակատամարտի արդյունքի վերաբերյալ արձանագրությունը լռում է, այնուամենայնիվ, կարելի է պնդել, որ ակնհայտորեն հաջողությունը բաբելացիների կողմը չի եղել: Արդյունքում բաբելացիները նահանջել են՝ ամայացնելով և հրի մատնելով շրջակայքի լեռնային որոշ քաղաքներ: Մեր խորին համոզմամբ, անիմաստ կլինի կարծել, որ Նաբոպալասարը, տապալելով այս անչափ կարևոր ռազմարշավը, դիմեր արկածախնդրության՝ շարժվելով ավելի հյուսիս:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, ասորեստանցիներին վերջապես հաջողվել է բաբելացիներից ետ գրավել Խառան քաղաքը: Ըստ էության՝ ասորեստանցիները շուրջ երկու տարի իրենց ձեռքում պահեցին այն: Չի բացառվում նաև այն հանգամանքը, ըստ որի հնարավոր է, որ Ք. ա. 609 թ. գրավելով Խառանը և ստանալով Նաբոպալասարի մոտեցման լուրը՝ եգիպտացիները մնային այնտեղ կամ կայազոր թողնեին քաղաքը պաշտպանելու համար, իսկ ասորեստանցիները բաբելացիների ճանապարհը շեղելու համար մեկնեին հյուսիս՝ դեպ Իզալլայի շրջանը: Մեր կարծիքով, այստեղ տեղի են ունեցել հետևյալ հավանական իրադարձությունները. կամ Նաբոպալասարը առանց դաշնակիցների օժանդակության խուսափել է բաց տեղանքում ճակատամարտ տալուց և ամայացնելով շրջակայքը՝ նահանջել, կամ ընդունել է մարտը և պարտություն կրել: Ի. Դյակոնովը բացառում է, որ Ք. ա. 609 թ. դեպի Հայկական լեռնաշխարհ արշավող բաբելացիներին դիմադրություն ցույց տային ասորեստանցիները, եգիպտացիները, մարերը կամ ուրարտացիները: Սակայն նա գտնում է, որ այնուամենայնիվ այդպիսի դիմադրություն բաբելացիներին ցույց են տվել, և որ դիմադրող ուժերը Ուրարտուի լեռներում հանդիպել են ինչ-որ կայազորների և նրանց դուրս են մղել այնտեղից, բայց որոնք ետ չեն վերադարձել: Դյակոնովը եզրակացնում է, որ դուրս են մղվել կա՛մ ասորեստանյան, կա՛մ ուրարտացիների կայազորները: Արդյունքում՝ հանգում է հետևյալին. տվյալ ժամանակահատվածում բաբելացիներին թշնամի է եղել իր կողմից հաշվի չառնված ինչ-որ ուժ, միաժամանակ բացառելով և՛ Ուրարտուն, և՛ Մարաստանը:

Ի. Դյակոնովի կարծիքով՝ Նաբոպալասարի արշավանքը Խառանից հյուսիս կարող էր պայմանավորված լինել նաև հումքի պաշարների շտապ անհրաժեշտությամբ, որի պակասը, ըստ երևույթին, բաբելացիներն ունեին:

Եվ, իբր, վերջիններս հումքի իրենց պակասը փորձել են լրացնել Վերին Եփրատի շրջանից, իսկ Ուրարտուն այդ ժամանակ, «եթե իհարկե ամբողջական պետություն» լիներ, հարձակվել է բաբելացիների վրա ու ետ շպրտել[27]:

[27] И. М. Дьяконов. Малая Азия и Армения ..., с. 41–43.

Այսպիսով՝ ամենայն հստակությամբ կարելի է նշել, որ տվյալ ռազմարշավի ժամանակ բաբելացիներն անհաջողության են մատնվել և անհիմն են այն բոլոր ենթադրությունները, ըստ որոնց հենց այդ նույն ժամանակ Ուրարտուն նվաճվել է մարերի կամ բաբելացիների կողմից[28]: Մեր խորին համոզմամբ՝ տվյալ ժամանակաշրջանում և տվյալ տարածաշրջանում Ուրարտուն հանդես է գալիս ո՛չ թե որպես քաղաքական միավոր, այլ, ինչպես արդեն նշեցինք, որպես աշխարհագրական անվանում: Իհարկե, այս ամենը չի ենթադրում, որ տվյալ ժամանակաշրջանում չէր կարող լինել ուրարտական թագավորություն: Իսկ ինչ մնում է Նաբոպալասարի ռազմերթի բուն նպատակին, ապա վստահ կարելի է պնդել, որ այն ուղղված էր ասորեստանյան ուժերի դեմ: Ռազմարշավի սկզբնամասի առումով գոնե՝ վերոշարադրյալը կասկած չի հարուցում:

B. M. 22047(96-4-9,152) *կամ ըստ Ա. Գրեյսոնի* Chronicle 4 *ժամանակագրության մեզ համար կարևոր հատվածը, որտեղ նկարագրված են Նաբոպալասարի կառավարման 18-րդ տարում (Ք. ա. 608 թ.) կատարված արշավանքները, ունի հետևյալ բովանդակությունը.*

1. MU XVIII^{kám} ^{d}Nabû-ápla-ú§ur ina ^{iti}Ulūli šàr Akkadî^{ki} ummāni^{me}-šú id-ke-e-ma
2. a≠(gú) ^{id}Idiqlat irtedi(uš)-ma ana šadî^{i} šá Bīt- ^{m} ï a-a-nu-ni-ia
3. pi-≠at ^{kur}Ú-ra-áš-ḫu i-li-ma ālāni^{me} ina išāti ⌜iš-ru-up⌝
4. ≠u-bu-ut-su-nu ma-diš i≠-tab-ta ina ^{iti} $ebēti šàr Akkadî^{ki} ana māti-šú ⌜itūra^{ra}⌝.

Թարգմանություն[29]

(1-4) Նաբոպալասարի տասնութերորդ տարին, Ուլուլու (օգոստոս–սեպտեմբեր) ամսին՝ Աքքադի թագավորը իր զորքերը հավաքագրեց և Տիգրիսի երկայնքով շարժվեց դեպի Բիթ-Խանունիայի լեռները՝ Ուրարտու երկրի շրջանում, քաղաքները հրի մատնեց (և) մեծ քանակությամբ ավար զավթեց: Թեբետ (դեկտեմբեր-հունվար) ամսին Աքքադի թագավորը վերադարձավ իր երկիր:

Արձանագրության տվյալների համաձայն՝ Ք. ա. 608 թ. բաբելոնյան զորքերը կրկին հայտնվում են Հայկական լեռնաշխարհի մատույցներում: Այս անգամ նույնպես նրանք հասան Ուրարտուի շրջան հանդիսացող կամ ավելի ճիշտ նրա սահմանների մոտ Բիթ–Խանունիայի լեռներին: Մասնագետները Բիթ-Խանունիայի տեղադրության հարցում միակարծիք չեն: Դ. Ուայզմանի կարծիքով՝ այն գտնվել է Իզալայից հյուսիս և Նածիբինուից հյուսիս-արևմուտք[30]: Սակայն տվյալ տարածաշրջանում Բիթ-Խանունիայի տեղադրությունն անհավանական է թվում: Ըստ որոշ մասնագետների, նշված տարածաշրջանում, ինչպես նաև Ամիդի շրջանում գտնվել է Բիթ-Զամանին[31]: Իսկ Ի. Դյակո-

[28] J. O a t e s. The Fall of Assyria (635–609 B. C.).– The Cambridge Ancient History, v. III, 2. London, 1991, pp. 182–183.

[29] *Թարգմանությունը մերն է:*

[30] D. J. W i s e m a n. *նշվ. աշխ., էջ 20, 82-83,* № *2 քարտեզը:*

[31] H. F. R u s s e l. Shalmaneser's Campaign to Urarḫu in 856 B.C. and the Historical Geography of Eastern Anatolia According to the Assyrian Sources.– Anatolian Studies, Journal of the Institute of Archaeology at Ankara, 1984, № 34, p. 199, И. М. Д ь я к о н о в. А с с и р о-в а в и л о н с к и е

նովը գտնում է, որ այն համապատասխանում է միջնադարյան Հայաստանի Խնուս բնակավայրին[32]: Այս տեսակետը, մեր կարծիքով, անհավանական է, քանզի դա արդեն կնշանակեր, որ բաբելացիները ոչ թե հասել են Ուրարտուի սահմաններին (արձանագրությունում՝ շրջանին), այլ ներխուժել են նրա տարածք:

Bīt - *«տուն» տեղանվամբ հայտնի են մեծ թվով երկրներ ու քաղաքներ, այն, անշուշտ, դինաստիական էր և իր անվամբ անմիջապես կապված էր իշխող հարստության կամ հարստության առասպելական նախահոր անվան հետ: Ինչպես նշում է Ա. Քոսյանը, այսպիսի տեղանունները մեծ մասամբ հանդես են գալիս Սիրիայում, հյուսիսային և հարավային Միջագետքում ու Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում[33]: Եվ հենց վերոշարադրյալն էլ ինքնին գալիս է հաստատելու, որ Բիթ-Խանունիայի նույնացումը Խնուսի հետ բացառվում է:*

Ելնելով արձանագրության հաղորդած տվյալներից՝ կարելի է եզրակացնել, որ Բիթ-Խանունիայի շրջանը պետք է որ գտնվելիս լիներ Իզալա լեռների մոտակայքում և, միաժամանակ, նախկին Շուպրիա երկրի տարածքում: Մեր կարծիքով, այն գտնվել է վերոհիշյալ լեռներից հյուսիս կամ հյուսիս-արևմուտք և հնարավոր է, որ իր տեղադրությամբ ընդհանուր առմամբ համապատասխաներ «Աշխարհացույց» Անգեղտուն գավառին: Շուպրիան որպես պետություն այլևս գոյություն չուներ Ասարհադդոնի (Ք. ա. 681-669 թթ.) կառավարման ժամանակներից: Ասորեստանցիները, նվաճելով Շուպրիան, նրա տարածքում ստեղծել են ասսուրական երկու պրովինցիա: Այսպիսով՝ քննարկվող ժամանակաշրջանում նախկին Շուպրիայի տարածքը, եթե գտնվում էր ասորեստանցիների տիրապետության տակ, ապա բնական պետք է համարել, որ բաբելացիները պետք է արշավեին այդ ուղղությամբ: Այս տարածքը կարող էր նաև ասորեստանցիների երբեմնի տերության վերջին մասնիկը լիներ:

Մեր կարծիքով, որ վերոհիշյալ տարածքում կարող էր լինել, ինչպես նշում է Ի. Դյակոնովը, մեր կողմից հաշվի չառնված քաղաքական մեկ այլ ուժ[34], ամենևին էլ չի բացառվում: Այստեղ խոսքը Եփրատի աջ ափին գտնվող նախկին լուվիական տարածքներում հանդես եկած և դեպի արևելք՝ Եփրատի ձախափնյակ ներթափանցած նոր էթնոքաղաքական միավորի մասին է: Մեր մոտեցումը խնդրի վերաբերյալ որոշ կետերում նմանվում է Ի. Դյակոնովի և Ա. Քոսյանի առաջ քաշած տեսություններին[35]:

Այսպիսով՝ ինչպես նշում է Ա. Քոսյանը, ասորեստանյան արշավանքների հետևանքով արևելյան Փոքր Ասիայում Մելիդի և Թաբալի լուվիական պետությունները քաղաքական անկում ապրեցին: Լուվիական ծագման արքայատոհմերի ոչնչացումը կամ վերաբնակեցումը, ազնվականության և բնակչության տեղահանությունները պիտի առաջ բերեին քաղաքական ու սոցիալական վակուում: Այս իրավիճակում կարող էին նպաստավոր պայմաններ ստեղծել տարածաշրջանի էթնիկական մեկ այլ

источники по истории Урарту.– ВДИ, 1951, № 2, 26, с. 294, прим. 34, *Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 70, 81:*

[32] И. М. Дьяконов. Малая Азия и Армения около ..., с. 43–44.

[33] *Ա. Քոսյան. Տուն Թորգոմայ, Երևան, 1998, էջ 61-62, նույնի՝ Սարգոն II-ը և Արևելյան Փոքր Ասիայի երկրները.– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVIII, Երևան, 1999, էջ 225:*

[34] И. М. Дьяконов. Малая Азия и Армения ..., с. 41–42.

[35] И. М. Дьяконов. с. 47-63, *Ա. Քոսյան. Տուն Թորգոմայ, նույնի՝ Սարգոն II-ը և Արևելյան Փոքր Ասիայի երկրները, էջ 219-229, նույնի՝* Sargon II and Kurtis of Atuna: an Interpretation, Studia Linguarum 3/1, Moscow: Languages of Slavonic Culture, 2002, pp. 191–203.

խմբի ծավալման ու քաղաքական իշխանության հասնելու համար[36]*: Այդպիսի քաղաքական ուժ կարելի է դիտել ոչ միայն Ատունան, այլ նաև «*BUt–TÞgarmā/Torgāmā – - *Տուն Թորգոմայ» քաղաքական միավորը, որը Ք. ա. 627 թ. Աշշուրբանապալի մահից հետո, և, մասնավորապես, ասսուրա-բաբելական հակամարտության տարիներին կարող էր, նպաստավոր պայմաններից ելնելով՝ անցնել Եփրատն ու տարածվել ավելի արևելք՝ օրինակ, նախկին Շուպրիայի տարածք: Այս պարագայում կարող է և նրանք բախված լինեն բաբելացիների հետ, և այլն: Սա, իհարկե, հակամարտության պատմության մեջ մի աննշան վարկած է, որը հետագայում կարող է հաստատվել կամ ժխտվել:*

Առաջ անցնելով, նշենք, որ երկու արձանագրություններում էլ որևէ տարածքի նվաճման մասին ոչ մի խոսք չկա: Չկա նաև ոչ մի ուղղակի խոսք անգամ Ուրարտուի գրավման կամ էլ նրա դեմ կատարված արշավանքի վերաբերյալ: Այս պարագայում ևս բաբելացիները բավարարվում են մի քանի քաղաք հրի մատնելով և, ռազմագերիներ ձեռք բերելով, ետ վերադառնում Բաբելոն:

Ք. ա. 607 թ. Նաբոպալասարը գահաժառանգ որդու՝ Նաբուգոդոնոսորի հետ արշավի են ելնում դեպի «… ? երկրի լեռները»[37]*: Այնտեղ թողնելով որդուն՝ Նաբոպալասարը զորքի մի մասի հետ վերադառնում է: Այդ ընթացքում Նաբուգոդոնոսորին հաջողվում է այդ անհայտ երկրի լեռներում նվաճումներ կատարել՝* iÞ-[tab]-ta adi p*i*-Þat ku[r. . . gi-m]ir šadUme ik-šu-ud[38]. *Ա. Գրեյսոնը կարդում է. «Նա նվաճեց բոլոր լեռնային տարածքները՝ մինչև [Ուրարտուի] շրջանը»*[39] *: Ա. Գրեյսոնի կողմից երկրանվան «Ուրարտու» վերականգնման առումով Ի. Դյակոնովը նշում է, որ երկրանունը, ամենայն հավանականությամբ, սկսվում է* Pi- *կամ* Ru-/Šub- *վանկերով*[40]*, իսկ Դ. Ուայզմանը տողի թարգմանության մեջ երկրանունը բաց է թողնում*[41]*: Հիմնախնդրի առումով այլ է Ջ. Ռիդի մոտեցումը.– Նա վնասված տողում*

---

[36] *Ա. Քոսյան. Տուն Թորգոմայ, էջ 45:*

[37] *Այս առումով տե՛ս վերը մեր կողմից առաջ քաշված վարկածը:*

[38] B. M. 22047, line 11.

[39] A. K. Grayson. *Նշվ. աշխ., էջ 97.*

[40] И. М. Дьяконов. Малая Азия и Армения ..., с. 39, прим. 49.

[41] D. J. Wiseman. *Նշվ. աշխ., էջ 65.*

առաջարկում է կարդալ «EN pi-[Ꞓat] tam-[tim?]*», այսինքն՝ «մինչև ծովի* (*ըստ հեղինակի Վանա լճի*) *շրջանը*[42]*:*

B. M. 22047 *ժամանակագրության հաջորդ տարիների պատմության նկարագրության մեջ այս ուղղություններով կատարված ոչ մի ռազմարշավի մասին խոսք չկա: Դեռ ավելին՝ հաջորդ* B. M. 21946 (96-4-9,51) *կամ ըստ Ա. Գրեյսոնի* Chronicle 5 *ժամանակագրության հաղորդումներում, որն սկսվում է Նաբուզոդոնոսոր II-ի (Ք. ա. 604–562 թթ.) կառավարման առաջին և ավարտվում քսանմեկերորդ տարով, հիմնականում նկարագրվում է սիրիա-պաղեստինյան ուղղությամբ կատարված ռազմական գործողությունները:*

АССИРО - ВАВИЛОНСКИЙ КОНФЛИКТ И СЕВЕРНЫЕ ПОХОДЫ НАБОПАЛАСАРА

РУСЛАН ЦАКАНЯН

Р е з ю м е

Вопреки традиционному мнению (в основном, в армянской историографии) о том, что потеря самостоятельности Урартского государства относится к периоду последнего этапа ассиро-вавилонского конфликта (609–607 гг. до н. э.) и связывается с походами Набопаласара (625–605 гг. до н. э.) в Северную Месопотамию, «Вавилонские хроники» (№№ B. M. 21901(96-4-9,6), B.M. 22047(96-4-9,152) не позволяют делать такие выводы. Строки 66–75 B. M. 21901 хроники явно свидетельствуют о том, что походы Набопаласара были направлены против ассирийцев, которые с помощью египетской армии осадили город Харран. По свидетельству 70–72 строк хроники Набопаласар вместо помощи Харрана вел бои в горах Ицаллы, где сжигая иразрушая многочисленные горные города, войска дошли до границ Урарту дословно «adi pi-Жat uruЪ-ra-бš-ꞓu – до области Урарту», поставил там гарнизон и вернулся в свою страну, так и не оказав помощи Харрану, который в тот момент явно был потерян. Словосочетание же «до области Урарту» (B. M. 21901, стк. 72 и B. M. 22047, стк. 3) нужно принимать как географическое а не политическое название. А в следующем году (B.M. 22047, стк. 1-4) вавилонские войска снова появились на подступах Армянского нагорья. В этот раз они опять дошли до границ или области Урарту – до гор Bīt-nanunia. По локализации последнего у специалистов нет единого мнения. Но, все-таки, следуя маршруту вавилонской армии, можно заключить, что она находилась в северо-западном или северном направлении от Ицаллы и, наверно, соответствовала уезду Ангелтун *(ՀԷ»ХпбхЭ)* «Армянской Географии». Исходя из вышесказанного, можно утверждать, что отождествление Bīt-nanunia с армянским Хнусом явно ошибочно. Нельзя исключать, что в этом регионе могла быть и совсем другая этнополитическая сила, которой

[42] J. R e a d e. Why did the Medes Invade Assyria?, in Lanfranci - Roaf – Rollinger (eds.) 2003, pp. 149, 152–156.

могла бы быть день ото дня развивающаяся «Вк‹-Т™garmā/Torgāmā– Дом Торгома». Итак, можно с уверенностью утверждать, что походы Набопаласара в то же время несомненно были направлены против ассирийцев.

THE ASSYRIAN - BABYLONIAN CONFLICT AND THE NORTHERN CAMPAIGNS OF NABOPOLASSAR

RUSLAN TSAKANYAN

S u m m a r y

In spite of the traditional opinion (basically in the Armenian historiography) that the loss of the independence of the Kingdom of Urartu dates from the last period of the Assyrian and Babylonian conflict (609–607 B.C.) and connects with the campaigns of Nabopolassar (625–605 B.C.) to the North Mesopotamia – the author on the basis of the unique source “Babylonian Chronicles” №№ B.M. 21901(96-4-9,6), B.M. 22047(96-4-9,152) concludes that such an opinion is unfounded. What is more, the lines of the chronicle 66-75 B.M. 21901 obviously affirm that the campaigns of Nabopolassar had been against the Assyrians which had besieged Harran with the help of the Egyptians. According to 70-72 lines of the chronicle Nabopolassar fought battles in the mountains of Izalla, where he set fire and destroyed numerous cities in the mountains, instead of helping Harran. The army reached the borders of Urartu “adi pi-≠at ^{uru}Ú-ra-áš-Å̆u – to the district of Urartu”, garrisoned there and Nabopolassar returned to his country, without helping Harran which had obviously been lost at that time. As to the phrase “to the district of Urartu” one must accept it as a geographical name not as a political one. Next year (B.M. 22047, lines 1-4) the army of Babylonia again approached the Armenian Highland. Once again they reached the borders of Urartu – the mountains of Bīt- ï anunia, of the localization of which specialists have no common opinion. However, according to the march of the Babylonian army one can conclude that it was situated in the north-western or northern part from Izalla and probably corresponded with the Angełtun (*Անգեղտուն*) region of the “Armenian Geography”. The author has come to the conclusion that the identification of Bīt- ï anunia with Old Armenian Khnunis is wrong. It may be possible that there was another ethno-political power in this region – getting more powerful “BêÅ̆-T™garmā/Torgāmā – The House of Torgom”. So, we can affirm that the Nabopolassar campaigns had undoubtedly been against the Assyrians.